

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՏԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. սույն թվականի հոկտեմբերի 22-ին հետևյալ ուղերձը հղեց Անթիլիաս.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱԹՈՌԱԿԱԼ
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԶԱՐԵՀ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՀՈՐԵՇՈՒԹԻՒՆ

Մենք, Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, տեղեկացած ըլլալով հոկտեմբերի սկզբի մամուլի հաղորդումներեն Ձեր որոշումի մասին՝ ամերիկահայ էջմիածնական թեմի շարք մը եկեղեցիներ Կիլիկյան Աթոռին իշխանության ներքև առնելու, Մեր վրդովումը և վիշտը կհայտնենք այս անհնախընթաց ոտնձգության և պատմականորեն ստեղծված կանոններու և իրավասության սահմաններու խախտման համար:

Հանուն Հայաստանյայց Եկեղեցվո Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայ հավատացյալ ժողովրդի, այսու վճռապես կհրավիրենք Ձեզ հետս կոչել Ձեր այդ որոշումը ի սեր Աստուծո և Ազգի:

Հետևողական մեր խաղաղասիրական և միասնության ոգիին և վերջ տալու համար ներքին անիմաստ հերձումներուն և ազգակործան պառակտումներուն, միաժամանակ վերստին կառաջարկենք Ձեզ անհապաղ կերպով բանակցություններ սկսիլ որևէ հարմար տեղ, վերականգնելու համար հոգևոր միությունը և խաղաղությունը մեր նախնյաց լույս հավատքով և դարերու հերոսական մաքառումներով ստեղծված ու պահպանված մեր Ս. Եկեղեցվո:

Կսիրենք հուսալ, որ Ձեր դրական պատասխանը պիտի ստանանք հառաջիկա տասնհինգ օրերու ընթացքին:

Եղբայրական սիրո ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի պատասխան սույն հայրապետական ուղերձի, նոյեմբերի 4-ի առավոտյան Մայր Աթոռում ստացվեց հետևյալ հեռագիրը.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա

ԷՋՄԻԱԾԻՆ

Կիլիկյան Կաթողիկոսության ուղղված Զերդ Սրբության 22 հոկտեմբերի հեռագիրը ստացված է: Կհայտնենք, թե Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսական դասուն մեջ Զավեն կամ Զարեհ անունով եպիսկոպոս գոյություն չունի: Կիլիկյան Աթոռը եղած է և կմնա նախանձախնդիր Հայ եկեղեցվո և հայ ժողովրդի միության և համերաշխության:

Խոնարհ աղոթակից՝
Կաթողիկոսության Դռան եպիսկոպոս

ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Բեյրութ, 2 նոյեմբեր 1957

Վեհափառ Հայրապետը հատուկ կոնդակով, ուղղված համայն հայ ժողովրդյան, պիտի ճշտի Մայր Աթոռի դիրքը Անթիլիասի և նրա հակականոնական ու եկեղեցաքանդ ընթացքի հանդեպ։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

5 նոյեմբերի 1957 թ.
Ս. Էջմիածին